



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

And S. piece of life

281

U-19

04 NOV 2009

ՅԿ: 33

Ս-19

# ՈՒՄՆ Է ԻՐԱԻՈՒՆԲԸ

ԿԵԼՈՒՆԺԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ս. Կյոփլածնի և Աղբրանկրատյոյու Հայոց Ս. Ըստուածամինն աւազ կկկկկցու:

Գրկեց Աղ. Սանն.

ԱՊՐԵՍՏՆԵՐԸ ԳՐԱՐԱՆ

Յարսանն Յակոբյ Գլատապկանկցի

1903

ՅՐԾՏ ՀԱՂ ԺՆ  
333

74 19

281:333.3

U-19

# ՈՒՄՆ Է ԻՐԱԿՈՒՆԲԸ

ԿԵԼՈՒՆԵԾԱԿԱՆ ԽՆԳԻՐ

Ս. Էջմիածնի և Աղեքսանդրապոլու Հայոց Ս. Աստուածածին առաջ կկեղեցու:

15666  
1000  
7/16

Գրեց Աղ. Սան.

ԱՂԵՔՍԱՆՊՐԵՍՏՈՒ  
Տպարան Յակովբ Ղաապեանցի

1903

26 JUL 2013

7116

## Պ Լ Ո Ի Խ Ա.

Дозволено Ценаурою, Тифлиси. 17-го Юля. 1903 года.

Պետ 1897 թուականից շարունակվում էր  
Եղեքսանդրապոլու նախկին վիճակային — Հոգևոր  
Գլխավորի Եղմիածնապատկան քաղաքացուած դատարկ  
Ենեակների և սրան կից Սուրբ-Ստուածածին  
Կեղեցուն պատկանուած կրպակների շինութեան  
ործը: Այդ կրպակները, որոնք թուով 21, բայց  
սյնքան հնացած, խախուտ էին, որ վտանգաւոր  
էր նոցա մէջ մնալը. այդ իսկ պատճառաւ Հո-  
գևոր կառավարութեան նախաձեռնութեամբ սկս-  
ուել էր կրպակների և սրան կից ինչպէս ասացի  
Գլխավորական սենեակների նոյն կրպակների հետ  
միացած շինութեան խնդիրը: Ով ոք տեսել է այդ  
կրպակները, որոնք գրանվում են յաջորդարանի  
հոլակապ շինութիւնից գէպի արևելք, «Գենե-  
տակի» փողոցի վերայ, գիտէ, որ յայնութեամբ  
չատ փոքր տարածութիւն են բռնում և սրանց  
սորոգութիւնը անպայման հարկաւոր էր, բայց  
Հոգևոր Եղմիածնութիւնը նպատակալարմար էր հա-  
մարել միացնել այդ կրպակներին նաև քաղաքացուած  
նախկին վիճակային գլխորցի տեղը, որովհետև ամ-  
բողջ շինութիւնը թէ ընդարձակ, յարմարաւոր

ճող անձն սկսում է դիմադրել, որ Մայր Աթոռ ոչ մի մաս չունի և կրպակները Եջմիածնապատկան անուանուած սենեակների հետ, շինելու հակառակ կարգադրութեան Հոգևոր Ծայրագոյն Իշխանութեան. իսկ միևս կողմից Քաղաքային Վարչութիւնը փութացնել է տայիս այդ շինութեան օր առաջ սկսելու գործը, որովհետև խանութները իւրեանց խախտուած հին դրութեամբ վտանգ են սպառնում. այս կարգադրութիւնը անկասկած օրինական էր և երեսփոխանը աշխատում էր սկսել շինութեան գործը և վերջացնել այս տարի:

Տարուս չորրորդ ամսում Ալէքսանդրապօլու յաջորդ բարձրապատիւ Տիրայր վարդապետը, որը լարուած սուր յարաբերութեանց մէջ էր երեսփոխան պ. Իւզրաշեանի հետ ինչ ինչ պատճառներով, փոխադրվում է պաշտօնով Տփլիս. նորան փոխարինում է բարձրապատիւ Ա. Սահակ վարդապետ Բաղդասարեանը, որը Ալէքսանդրապօլու հասարակութեան ծանօթ դեռ 1884—85 թուականներում դարձեալ, փոխանորդական պաշտօնով եղել է այստեղ:

Չնայելով Տէր-Սահակ վարդապետի ջանքերին երեսփոխանը դարձեալ մնում է իւր ասածին լամառութեամբ, պահանջելով իբրև ժողովրդեան բերանից, որ ամբողջ յաջորդարանի գաւիթի կէսն էլ Եկեղեցունն է և Եջմիածինը ոչ մի մաս չունի: Վէճը հեռագհետէ տաքանում և սուր կերպարանք է ստանում:

Տողերիս գրողը լինելով Հոգևոր կառավարութեան պաշտօնեայ, ծանօթ ամբողջ գործի պատմութեանը և միևնոյն ժամանակ սրտանց չուզենալով, որ Մայր Աթոռը 'ի տարապարտուց գրկանք կրի, որի շահը անբաժան և եկեղեցունը պահպանելը, աւելի մօտ էր համարել և համարում իւր սրտին, և որպէս զի Մայր Աթոռի իրաւունքը պարզուի հասարակութեան առաջ աւելի փաստական կողմերով, գրաւոր ապացոյցներով, Տէր փոխանորդի յանձնարարութեամբ մտնելով արիւիւ որոնում է յաջորդարանի, դպրոցական սենեակների և եկեղեցական կրպակների նախնական շինութեանց գործը: Քտնուեցաւ մի գործ № 7. կազմած 1837 թուին (այս թուականին է հաստատուել Հայոց Լուսաւորչական Եկեղեցու պօլօթենիէն, որի վերջին հրատարակութեան 1896 թ. ուսերեսնից թարգմանական աշխատութեանս տպագրելու թոյլտուութիւնը դեռ չի ստացուել), այդ գործը լուսարանեց ամեն մի մութ կէտ այդ վիճելի տեղերի սեփականութեան և իրաւունքի վերաբերեալ. ապացուցուեց միանգամայն, որ Ս. Եջմիածնի Մայր Աթոռն է եղել տէրը ամբողջ մի կվարտալի որի մի մասի վերայ, Հոգևոր Իշխանութեան զիջողութեամբ շինուել է խանութներ քաղաքի Ս. Աստուածածնի եկեղեցու համար, որ այն ժամանակ շատ աղքատիկ ըստ տնտեսականին վիճակ էր ունեցել. 'ի հարկէ երեսփոխանի և իւր համախոհների վերաբերմամբ հիասթափութիւնը շատ զօրեղ էր:

Հետաքրքիր պատմական նիւթ է ներկայացնում այդ գործը, որի հետ մասամբ ծանօթացնելը յարգելի ընթերցողին հարկաւոր եմ համարում:

**Գ Լ Ո Ւ Խ Բ.**

Կարբեցի Յովհաննէս Կաթուղիկոսը, մայիս ամսի 26-ին 1837 թուին, արձակում է մի կոնդակ № 271, Շիրակայ յաջորդ Նիկողայոս Եպիսկոպոսին, հետևեալ բովանդակութեամբ՝ «Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր-Յովհաննէս և շնորհիւ նորին կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն Պատրիարք առաքելական եկեղեցւոյ Հայաստանեայց և Սրբոյ Աթոռոյ Կաթուղիկէ Էջմիածնի: Գերապատիւ Սրբազան Նիկողայոս Եպիսկոպոսին յաջորդի Շիրակայ: Մտաց գրութեան Ձեր առ բարձր Սրբազան Յովսէփ արքեպիսկոպոսն հասու եղաք՝ որ վասն տեղւոյ և շինութեան յաջորդարանի այգը 'ի Գիւմրի. ուստի և գրեցան թուղթ առ պարոն Կոմէնդանտն տեղւոյդ և առ Գաւառապետն, զի նոքա ևս 'ի կողմանէ իւրեանց 'ի գործ դիցեն գամենայն կարևոր օգնականութիւնս՝ եթէ վասն ընդարձակ տեղւոյ և յարմարաւոր դրութեան նորա, և եթէ շինութիւնն նպաստելոյ 'ի ժողովրդականացս, գրեցաւ թուղթ մի ևս օրհնութեան և յորդորանաց առ պատուաւոր անձինս ժողովրդեան տեղւոյդ, զի որպէս ինքեանք նմանապէս և հասարակութիւն

յորգոր լինիցին օգնելոյ շինութեանց տեղւոյ Հագևոր կառավարութեան, ուսումնարանի և համբարանոցին. զայսոսիկ թուղթս 'ի միոյ կողմանէ փակեթին բաց թողաք, զի դուք ընթերցեալ և հասու եղեալ մտաց գրութեանցն առ նոսա, և ապա ամբացուցեալ զայնս յանձնեալիք իւրաքանչիւրոցն: Իսկ դուք 'ի մասին ծախուց համբարանոցի շինութեան մի ինչ աւելի հոգ ունիցիք զի մեք օգնական լինելոց եմք այնմ սրով կերպիւ և իցէ. բայց միայն աւելի ջանադիր լերուք, զի 'ի յարմար տեղւոյ լինիցի հիմնարկութիւն վասն խոնաւութեանց և շինուածքն հաստատ: Եւ մեք եմք և մնամք միշտ բարիացակամ առ Ձեզ Կաթուղիկոս ամենայն Հայոց Յովհաննէս»:

Ինչպէս տեսանք յաջորդարանի, ուսումնարանի և շտեմարանի շինութեանց համար, 'ի հարկէ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի անուևով, առաջարկվում է վեհափառ կաթուղիկոսի կողմից մի յարմարաւոր տեղ գտնել քաղաքում և հիմք է գրվում այդ գործին 1837 թուականից: Գրադրութիւն է սկսվում այն ժամանակ Գիւմրուայ ամրոցի կոմենդանտ Ֆրէյլենզ ազգանունով զնդապետի հետ, որին և առաջարկում են հաստատելու Էջմիածնապատկան շէնքերի յատակազիծը:

Տեղը արդէն կար տուած և նախագծուած էր շինել մի յաջորդարան, համբարանոց և գոմ Ս. Էջմիածնի անուևով, սրանց հետ միասին միւսնոյն կվարտալում և վարժատուն, որը այժմս այս հասել

աւերուած վիճակի և վիճելի առարկայ դարձել Ս. Աստուածածին եկեղեցու երեսփոխանի հետ:

Կառուցանվում են այդ բոլոր շինութիւնները տեղական յաջորդի Հոգացողութեամբ վիճակային արդիւնքներից 'ի հարկէ իւր ժամանակի պահանջի համեմատ թեթև ծախքերով և Մայր Աթոռը տէր է լինում լիազօրութեամբ այդ ամբողջ շինութիւններին. սակայն տեղական Հոգևոր իշխանութիւնը 'ի նկատի առնելով այն ժամանակ, որ Ս. Աստուածածնի եկեղեցին անտեսականապէս աննախանձելի դրութեան մէջ է, հասարակութեան ներկայացուցիչների թախանձանքի համաձայն Մայր Աթոռին յանձնուած արդէն տեղից, նոյն վարժատան կից (յաջորդարանից դէպ արևելք) կտրոււմ են քսան և եօթն սաժէն տարածութեամբ զետին և տալիս Ս. Աստուածածին եկեղեցուն խանութներ շինելու համար, որպէս զի եկեղեցին ստանալով արդիւնքը անտեսականապէս բարւոքուի: Հուսկ յետոյ Աղէքսանդնապօլու ջերմեռանդ հասարակութեան նուիրատուութեամբ կառուցանվում են և այն կրպակները 27 հատ, (շատ փոքր են շինվում) և այս իսկ կրպակներն են որ այժմ հնացել են և կարևոր վերանորոգութեան: Իբրև ապացոյց, որ այդ եկեղեցական կրպակների տեղն էլ մինչ անգամ Մայր Աթոռի Ս. Էջմիածնի սեպհականութիւն են, բերում եմ այստեղ Հոգևոր կառավարութեան գործերից քաղած, օրագրութեան մի մասը, կազմած 18 ապրիլի 1841 թուականին: «Հրամայեցին՝ որովհետև

'ի 27 սաժէն տեղի ստացելոյ 'ի տեղւոյ յաջորդարանի Աղէքսանդրապօլու բնակիչք այնք քաղաքի շինեալ են քսան և եօթն կրպակս յանուն եկեղեցւոյ երկու աչք տուն վասն վարժատան յորում այժմ կրթին մանկունք նոցա մասնաւորապէս, գոմ և մարաք և այլ պոկաս տեղիս յաջորդարանի ծախեալ են 'ի վերայ այսոցիկ բոլոր շինութեանց լեկեղեցական գրամոց 1200 մանէթ զայսոսիկ շինութիւնս աւարտեալ միանգամայն կրպակքն յանձնեալ են 'ի տնօրինութիւն երեցփոխանի եկեղեցւոյ Ս. Աստուածածնի վասն տալոյ 'ի վարձու և զգրամս գրելոյ 'ի տուժարին մուտք վասն որոյ զայսմանէ ծանուցանել վիճակային կոնսիստորիային Հալոց Երևանայ»:

Բացի սորանից այն ժամանակներում, Գիւմրին, որ այժմ Աղէքսանդրապօլ է կոչվում, ամբողջական քաղաք լինելով Տաճկաստանի սահմանագլխի վերայ, քաղաքի ազատ հողերի վերաբերմամբ, ուրիշին յատկացնելու, տալու և որպէս իրաւասու կարգադրութեան իրաւունքը վերապահուած է եղել բանձրագոյն պետական հաստատութեամբ ամրոցի գլխաւոր զինւորական կառավարչին, որին այն ժամանակ այսինքն 25 ապրիլի 1840 թուականին, զիմելով Գիւմրուայ բնակիչներից խնդրել են գրաւորապէս թողաւարութիւն շինելու Ս. Աստուածածին եկեղեցու անունով կրպակներ, այն տեղի վերայ, որ տրուած է եղել յաջորդարանի և այլ աթոռապատկան շէնքերի համար, սակայն

ամբողջի կառավարիչ գնդապետը իւր ինժեներ-ճարտարապետի միջոցաւ հարցրել է առանձին գրութիւնով, փոխանորդ Նիկողայոս Եպիսկոպոսի հաճութիւնը այդ մասին, երևի կամենալով արգելք դնել քաղաքացիներին եկեղեցական կրպակների շինութեանը. իսկ Նիկողայոս Եպիսկոպոսը, որը տհաճ չէր եկեղեցուն տալու մի փոքր մաս լաջորգարանի-էջմիածնապատկան տեղից յայտնել էր իւր համաձայնութիւնը նոյնպէս գրով: Այսպէս ուրեմն շատ պարզ է և ակներև, որ Հոգևոր իշխանութեանն են ճանաչել իրաւատէր այդ հողերի վերաբեմամբ, որոնք և յանձնուած են եղել վերոյիշեալ Ս. Էջմիածնի Հոգևոր ներկայացուցչին, հետևեալ վկայականով, որի բովանդակութիւնը հարկաւոր եմ համարում նոյնութեամբ դնել այստեղ:

Свидѣтельство. Тысяча восемьсотъ тридцать седьмого года. Августа седьмого дня, дано сіе Бамбако-Шурагельской дистанціи Пастырю Епископу Никогосу въ томъ, что для построения по **Высочайше** утвержденному въ 28 день февраля сего года, плану города Гумровъ Архіерейскаго дома, училища и магазейна отведено въ кварталѣ подь № 10-мъ пустопорожнее мѣсто противу Армянской церкви широтою восемнадцать сажень, а въ длину квартала тридцать шесть сажень съ тѣмъ чтобы означенныя строенія были выстроены согласно даннаго за подписомъ моимъ

фасада въ удостовѣреніе чего свидѣтельствую подписомъ. Крѣпость Гумры Инженеръ подполковникъ Рудзиновъ № 214.

Գալով այն ենթադրութեանց, որ քաղաքացիներն են շինել կրպակները և ուսումնարանական սենեակները, այդ մեր կարծիքով չի կարող հիմունք ծառայել գրաւելու այժմ և այն գետինը, որը տրուած է որպէս սեպհականութիւն Մայր Աթոռի անունով: Այս Ս. Էջմիածնի Մայր Աթոռը տէր է եղել միշտ այդ տեղերին, տէր է և այժմ հետևապէս անիրաւացի կ'լինի վէճ յարուցանել նորա դէմ այդ առթիւ: Խնդիր է զարթնում այժմ բնականաբար և օրէնքով Սրբազան Սինոդի կողմից որպէս ծայրագոյն Հոգևոր իշխանութեան վարչական-ազմինխտրական կարգով հրամայելու օտարացնել այդ տեղերը եկեղեցուց, որովհետև, նոյն Սինոդը իւր նախագահի-վեհապետի ամենայն Հալոց Կաթողիկոսի հետ միասին լիազօր են և իրաւասութեան հանրապէս բոլոր հայ լուսաւորչական եկեղեցիների կառավարութեան և տնտեսական պահպանութեան: Անկասկած գործը ցանկալի չէր, որ այս կէտին հասնէր:

Պաշտօնական գրազրութիւնք շարունակվում են Հոգևոր կառավարութեան Երևանու վիճակալին կոնսիստորիալի և Սրբազան Սինոդի միմեանց հետ այդ թուականներում: Հոգևոր կառավարութիւնը բոլոր ժամանակ հրահանգուել է իւր ծայրագոյն Հոգևոր իշխանութեան կողմից: Միևնոյն եկեղե-

ցական կրպակների շինութեանց համար, Երևանու  
 Հայոց վիճակային Հոգևոր Ատեանը 12 լուսուարի  
 1840 թուականի № 41, հրամանով պատուելիբուժ  
 է Հոգևոր կառավարութեանը՝ ահաւասիկ հրա-  
 մանի բովանդակութիւնը՝

«Հրաման Նորին Կայսերական Մեծութեան  
 Ինքնակալին ամենայն Ռուսաց, Երևանոյ Հայոց  
 Հոգևոր կառավարութիւնն: Ըստ հրամանի Նորին  
 Կայսերական Մեծութեան ՚ի կոնսիստորեային լու-  
 եալ զհրաման լուսաւորչական Հայոց Սինհոզոսին  
 Եջմիածնի ՚ի 29 դեկտեմբերի անցեալ 1839 ամի  
 համար 1835, և զգորութեան օրագրութեան  
 իւրոյ: Հրամայեցին՝ զայս հրաման ընկալեալ ՚ի  
 ծանօթութիւն կցեալ ըստ գործոյն, և Հոգևոր  
 կառավարութեանդ Գիւմրույ հրամանագրել վասն  
 ստանալոյ իւրաքանչիւր ամուսնաւոր գերգաստա-  
 նէ բնակչաց քաղաքի Գիւմրուայ զ 10 կոպ. ար-  
 ծաթի, ունել զկատարեալ հոգուհակութիւն, վասն  
 անպատճառ մտանելոյ յօգուտ վիճակային ար-  
 դեանց. իսկ ՚ի մասին շինելոյ յօգուտ աւագ եկե-  
 դեցույ զկրպակս 27 սաժէն տեղուոյ հուպ յաջոր-  
 դարանի տեղուոյ վարել ըստ գորութեան տնօրէ-  
 նութեան Սիւնհոզոսի, և յօրագրութեանէս զքաղ-  
 ուածս հանեալ կազմել զնոր գործս որ շինութեան  
 կրպակաց յօգուտ եկեղեցույ Գիւմրուայ արդեամբ  
 ժողովրդականաց»:

Գ Լ Ո Ի Խ Գ.

Պետք է գիտենալ, որ յաջորդական տանը և  
 եկեղեցապատկան հին կրպակներին կից գտնվում  
 է և Հոգևոր կառավարութեան գիւանատունը, որի  
 շէնքը հնացած լինելով վիճակի փոխանորդի կող-  
 մից առաջարկուել էր յատակագիծ նոր վերնայարկ  
 սենեակներ շինելու կառավարութեան համար միև-  
 նոյն տեղի վերայ և ստորին մասը վերածելու  
 կրպակների ՚ի հարկէ Ս. Եջմիածնի անուանով: Երկ-  
 յարկ շինութեան թույլատուութիւնը Սրբազան Սի-  
 նօղի կողմից արդէն տրուած էր անցեալ տարուա-  
 նից, բայց մակարդակը, որ Երևանու պարոն Նա-  
 հանգապետից վերադարձուել էր, քաղաքային վար-  
 չութեան ձեռքով հաստատելու, չի հաստատվում  
 որպէս զի ծրագրուած շէնքը սկսուի. իսկ սորա  
 պատճառը դարձեալ պետք է որոնել եկեղեցական  
 վիճելի կրպակների շինութեան գործի մէջ: Երես-  
 փոխան պ. Իւզբաշեան որը վերևում ինչպէս ասա-  
 ցի մի եռանդոտ անձնաւորութիւն է, այնպէս է  
 համոզուած, և կամ համոզուել, որ Հոգևոր ա-  
 ռավարութեան գիւանատունն էլ պատկանում է  
 Ատուածածին եկեղեցուն և ոչ թէ Մայր Աթո-  
 ռին, այդ պատճառաւ և բողոքել է քաղաքային  
 վարչութեան չհաստատել այդ առաջարկուած յա-  
 տակագիծը և այս ամենը նորա Համար, որպէս զի  
 ծխականաց ժողովի վճռով, որոշումով յաջողացնի  
 զբաւել և այդ սենեակները: Թող ների տողերս

գրողին, պ. Բւզբաշեանը լիշեցնելու, որ երեսփոխական իրաւանց և պարտականութեանց մասին նախատեսնուած են պետական հաստատուած օրէսգրքում. (տես կանոնադրութիւն հայ լուսուսարչական եկեղեցու տնտեսական, վարչական մասերի կառավարչութեանց վերաբերեալ գիրք հատ. ժա. մասն 1. հրատ. 1896 ամի, յօդ. 1224 — 123).  
 Уставъ духовныхъ дѣлъ иностранныхъ исповѣданій изд. 1896 г.:

Այստեղ որոշուած են երեսփոխանների իրաւանց սահմանը, այլապէս չէր կարող լինել, արգեօք կ'գտնի՞ մի յօդուած օրէնքի, որով իրաւունք արուէր նորան եկեղեցու ծխականների որոշումով տիրել գրաւել ուրիշ հաստատութեան պատկանած կալուած, ունի՞ արածնութիւն առանց Հոգևոր իշխանութեան գիտութեան եթէ չ'ասենք իրաւունքի, ինքնուրոյն ժողով գումարել և եկեղեցու ներքին բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ շօշափել, պատասխանը թողնում եմ բանիմաց հասարակաց գատաստանին: Չկամենալով շեղուել նպատակիցս, շարունակեմ ասելիքս, որ Հոգևոր կառավարութեան յատակագիծը հաստատուելուն խոչնդոտ լինելու իրաւունք չունէր պ. երեսփոխանը, որը միջամտելու բողոքելու այն իրաւունք ունէր և պարտական էր այն դէպքում, երբ խլվում էր եկեղեցական որ և է կալուած: Այստեղ շօշափվում է արգէն իրաւանց, սեպհականութեան խնդիր, Ս. Եջմիածնին է պատկանում թէ Աստուա-

ծածին եկեղեցուէն այդ շինութիւնը, վիճելի դէպքում այդ իրաւունքը վերապահուած է տէրութեան օրէնքի տրամադրութեամբ գատաստանական տաճաններին և ոչ քաղաքային վարչութեան, որի միակ պարտականութիւնն է տեսնել, ստուգել թէ՛ ծրագրած որ և է շինութեան յատակագիծ համապատասխանում է ճարտարապետական մասի վերաբերեալ կանոնադրութեան (по строительной части) և արգելք ներկայանում թէ ոչ իսկ թէ այստեղ ծխական ժողովի գործ չկայ, որը եթէ լինի էլ, ինչ արժէք կարող է ունենալ իրաւարանական տեսակետից, այդ ևս պէտքէ հասկանալի լինի շատերին: Պարտք եմ համարում ասել, որ սրախս ցանկութիւնն է որ խաղաղութեամբ առանց մտքեր լարել տալու, վերջ տրուէր այս գործին, որպէս զի ոչ Մայր Աթոռը և ոչ Եկեղեցին, որ երկուսն էլ մերն են զրկանքներ ունենան ապագայում, և մեր համեստ կարծիքով կ'լինի այս այն ժամանակ, երբ յարգելի երեսփոխանը գործէ համերաշխութեամբ տեղւոյս լաջորդի հետ: Յոյս կայ, որ այսպէս և վախճան ստանայ գործը:

1000  
15876

**Գ Լ Ո Ւ Խ Գ.**

Յարգելի ընթերցող հայ հասարակութեան առաջ արգէն շատ պարզ պատկերացաւ վերև նկա-

րազրած պատմութիւնից, եթէ ինչ չափով Ս. Աստուածածին եկեղեցին իրաւատէր է համարուում դպրոցական դատարկ սենեակների վերաբերմամբ. հարց. արդեօք չունի իրաւունք Սրբազան Աինոգրը գրաւելու այն հողը, գետինը որի վերայ կառուցուած են եղել եկեղեցական կրպակները, բայց այս ամենը մեր Հոգևոր իշխանութիւնը գիտենալով հանդերձ և միշտ ցոյց տալով ամեն մի գործում, իւր գիջող հայրախնամ հովանաւորութիւնը և համբերատար ոգին, առաջարկել է երեսփոխանին միասին շինել կրպակներ դատարկ աւեր սենեակների հետ, որպէս զի եկամուտը առաւել լինի թէ մեր Ս. Մայր Աթոռի և թէ եկեղեցու համար, և զրկանք չ'կրէ ոչ մէկը և ոչ միւսը, սակայն անբարեմիտներ գտնուեցան այժմ ևս աւանդ, որ աշխատում են ջլատել Մայր Աթոռի ոյժերը բաժանելով եկեղեցին Ս. Եջմիածնից, չ'ախորժելով ճանաչել ծալրագոյն Հոգևոր իշխանութեան իրաւասութիւնը եկեղեցիների առհասարակ վարչական մասերի նկատմամբ:

Իւր արժանաւոր նախորդներին արժանաւոր յաջորդ հանգուցեալ Նիկողայոս եպիսկոպոսը այն ժամանակուայ Նիքակայ Հոգևոր գործոց կառավարիչ, որքան աշխատել, չարչարուել է Ս. Եջմիածնի շահերի համար, տեղ, ազատ գետին է (որ այժմ քաղաքի կենդրոնն է և լաւ մասը) ձեռք բերել իւր վեհապետի օգնութեամբ, շենքեր արել, բայց այժմ նորան փոխարինող Հոգևոր

իշխանութեան ներկայացուցիչները չ'ունին իրաւունք խօսելու և պաշտպանելու իւրեանց իրաւունքները, որովհետև ժողովուրդը... անմեղ, խեղճ ժողովուրդ, զրգուվում է Հոգևոր իշխանութեան դէմ: Յաւելով պէտք է ասել, որ ի դուր են կատարվում այս ամենը:

Նստատակիցս դուրս լինելով այս մասին առարկելը, յարգելի ընթերցող հասարակութեան մի փոքր պատմութիւն ունիմ անցեալից հետեւալ զլիսում այդ եկեղեցապատկան կրպակների առթիւ, որ կապ ունի նկարագրութեանս հետ:

### Գ Լ Ո Ւ Խ Ե.

Աղէքսանդրապոլում գոյութիւն ունէր աղքատախնամ հիմնարկութիւն, որը հաստատուած էր երջանկալիշատակ Մատթէոս կաթողիկոսի սրբատառ կոնդակով տրուած 1861 թուին: Այդ եկեղեցական հիմնարկութիւնը, որը պահպանում էր և խնամում մասամբ իւր աղքատներին, երկրիս կառավարչապետի կարգադրութեամբ փակվում էր գեկտեմբեր ամսու 29-ին 1896 թուականի. իսկ բոլոր գործերը, արժէքաւոր թղթերը և գույքերը յանձնվում Հոգևոր կառավարութեան (թուղթ պ. գաւառապետի Աղէքսանդրապոլու 28 գեկտեմբեր 1896 ամի № 4847):

Աղքատանոցը կառավարվում էր հասարակութեան կողմից ընտրուած հոգաբարձութեան և մի հոգևորական նախագահի ձեռքով, Հոգևոր իշխանութեան հսկողութեան ներքոյ, սրին նույնպէս և քաղաքական իշխանութեան հաշիւ էր տրվում ամսական: 1895 թուին Էջմիածնի Սրբազան Սինոդը լիշեալ Հոգաբարձութեան միջնորդութիւնը լարգելով թողարտում է իւր 23 դեկտեմբերի թ. 1197 հրամանով, այն եկեղեցական հին կրպակները նորոգել հիմունքից աղքատանոցի գանձարանի հաշուից և յետոյ արգիւնքը գործադրել աղքատ, չքաւոր ընտանիքների կարիքների վերայ, անկասկած եկեղեցին էլ այն ժամանակ չէր կարող ստանալ ոչ մի կոպէք: Ձեռնարկվում է յատակադժի (ПЛАНЪ) կազմութիւնը, սրը այժմ հաստատուած պահվում է Հոգևոր կառավարութեան մէջ: Կրպակները լինելու էին 16 հատ. բայց ինչպէս ժողովրդական առածն ասում է «ուրբաթը շուտ եկաւ քան թէ շաբաթը» շուտով փակուեցաւ աղքատանոցը, որ 36 տարի պահում էր իւր գոյութիւնը և որի հետ խափանուեցաւ նոյն կրպակների շինութեան գործը:


Ահաւասիկ ամբողջ գործի համառօտ պատմութիւնը Աղէքսանդրապօլու Ս. Աստուածածին եկեղեցուն պատկանած հին խանութների և սրանց կից Էջմիածնապատկան նախկին վիճակային Հոգևոր դպրոցի դատարկ սենեակների, որոնք այժմ

վերանորոգվում են Ս. Աստուածածին եկեղեցու երեսփոխան պ. Տ. Իւզբաշեանի ձեռքով:

Այս ճիշտ նկարագիրը պարաք համարեցի ներկայացնել լարգելի և հետաքրքիր ընթերցող հայ հասարակութեանը, բայց մասնաւորապէս Աղէքսանդրապօլի պատուական և ընտիր ժողովրդեան, որպէս զի հեռացուին զանազան թիւրիմացութիւններ:

Մի քանի խօսք և վերջ: Այժմ հարց է զարթնում ումն է իրաւունքը Ս. Էջմիածնինը, որ կէս դարուց աւելի շարունակ տէր է եղել իրաւամբ մի կալուածքի, թէ քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցուն. թող արգարամիտ հայ ընթերցողը դատէ, բայց որովհետև ժողովուրդն է միջամտում գիտութեամբ թէ անգիտութեամբ ներկայ իրաւասութեան հարցի մէջ այդ իսկ պատճառաւ խնդիրը շատ փափուկ է ներկայանում, ի վերայ այսր ամենայնի թող լաւ հասկանայ մի հայ համայնք, որ Ս. Աթոռի Էջմիածնի շահը աւելի պետք է գերադասել քան մի ծխական եկեղեցու, որին օժանդակել է և կարող է միշտ ևս օժանդակ լինել բարոյապէս և նիւթականապէս Մայր Աթոռը, որի հովանաւորութեան տակ ապրում է հայ ժողովուրդը, և որտեղից վերջապէս որոշ չափով լոյս գիտութիւն է տարածվում հայ աշխարհի վրայ իսկ իւրաքանչիւր մաքուր զգացմունքով հայ պարծանքով է լիշել և լիշում նրա սնունը իւր





7116